



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՅ ԹԵՄ ԴԻՕՇԵՍ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՍ ԿԱՆԱԴԱ

ԿԱՆՈՒԹԵՂ

ՍՐ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԽԱԿՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH

BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ՍԱՅՐ ՍԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 3 ՆՈՅԵՄԲԵՐ 2019

135

DIMANCHE, 3 Novembre 2019

ՏՈՒ ԱՄՆՆԱՅԻՆ ՍՐԲՈՅ ՀՆՈՅ ԵՒ ՆՈՐՈՅ
ՑԱՅՍԻԿ ԵՒ ԱՆՅԱՅՍԻԿ



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ը Կիրակի Ձկնի Սրբոյ Խաչին

8^{ÈME} DIMANCHE APRÈS LA SAINTE CROIX

FÊTE DE TOUS LES SAINTS, ANCIENS OU NOUVEAUX, CONNUS ET
INCONNUS

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՓԵՍՍՑԻՆԵՐ
ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (1.1-14)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (8.17-21)

Les lectures de la Bible d'aujourd'hui

ÉPHÉSIENS 1.1-14

LUC 8.17-21

Պատարագիչ եւ քարոզիչ՝

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ. ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - Ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ Ժամը - 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Չոզեհանգիստ Ժամը - 12:30-ին

Requiem à 12h30

DIACRES – ACOLYTES

Chef de chœur: M. Sarkis Barsemian

Organiste: Mme Houry Bedrossian

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES
DE DIMANCHE**



**THE SUNDAY
READINGS**

ԵՓԵՍԱՅԻՆԵՐ 1.1-14

1-Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Զրիստոսի առաքեալ, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն ու Զրիստոս Յիսուսով հաւատարիմներուն. 2-շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Յօրմէն, ու Տէր Յիսուս Զրիստոսէ:
3-Օրհնեալ ըլլայ Աստուած եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Զրիստոսի Յայրը, որ Զրիստոսով օրհնեց մեզ ամէն տեսակ հոգեւոր օրհնութիւններով՝ երկնային վայրերու մէջ, 4-ինչպէս անով ընտրեց մեզ աշխարհի հիմնադրութենէն առաջ, որպէսզի մենք իր առջեւ սուրբ եւ անարատ ըլլանք սիրոյ մէջ: 5-Նախասահմանեց մեզ իր որդեգրութեան՝ Յիսուս Զրիստոսի միջոցով, իր կամքին բարեհաճութեան համաձայն, 6-որպէսզի գովաբանենք իր շնորհքին փառքը. անով ընդունելի դարձուց մեզ՝ Սիրելիին միջոցով: 7-Իրմով մենք ունինք ազատագրութիւն՝ իր արիւնին միջոցով, ու մեղքերու ներում՝ իր շնորհքին ճոխութեան համեմատ. 8-անով ճոխացուց մեզ՝ ամբողջ իմաստութեամբ եւ ուշիմութեամբ: 9-Գիտցուց մեզի իր կամքին խորհուրդը՝ իր բարեհաճութեան համաձայն, որ իր մէջ՝ առաջադրած էր. 10-որպէսզի ժամանակներու լրումին տնտեսութեան մէջ՝ Զրիստոսով համախմբէ ամէն բան, անոր մէջ միացնէ թէ՛ երկինքի մէջ եղողները, թէ՛ երկրի վրայ եղողները: 11-Անով ստացանք նաեւ ժառանգութիւն մը, նախասահմանուած ըլլալով համաձայն առաջադրութեան անոր՝ որ կը ներգործէ ամէն բան իր կամքին ծրագիրին համաձայն, 12-որպէսզի մենք՝ նախապէս Զրիստոսի ապաւինողներս՝ գովութիւն ըլլանք իր փառքին: 13-Դ՛ուք ալ ապաւինեցաք անոր՝ երբ լսեցիք ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան աւետարանը, եւ հաւատալէ ետք անոր՝ կնքուեցաք խոստացեալ Սուրբ Յոգիով, 14-որ մեր ժառանգութեան գրաւականն է մինչեւ ստացուածքին ազատագրութիւնը՝ իր փառքին գովութեան համար:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8.17-21

17Որովհետեւ չկայ գաղտնիք մը՝ որ բացայայտ պիտի չըլլայ, ո՛չ ալ պահուած բան մը՝ որ պիտի չգիտցուի ու երեւան չէլլէ: 18Ուրեմն զգուշացէ՛ք թէ ի՛նչպէս կը լսէք. որովհետեւ ո՛վ որ

ունի՝ պիտի տրուի անոր, իսկ ո՛վ որ չունի՝ անկէ պիտի ամուսնի
նոյնիսկ ինչ որ ինք կը կարծէ թէ ունի»: 19Անոր մայրն ու
եղբայրները եկան իրեն, բայց բազմութենէն չէին կրնար
մօտենալ իրեն: 20Անոր լուր տուին՝ ըսելով. «Զու մայրդ ու
եղբայրներդ դուրսը կայնաճ են եւ կ'ուզեն տեսնել քեզ»: 21Ան ալ
պատասխանեց անոնց. «Իմ մայրս ու եղբայրներս անոնք են, որ
կը լսեն Աստուծոյ խօսքը եւ կը գործադրեն զայն»:

Éphésiens 1.1-14

1Paul Apôtre de Jésus-Christ, par la volonté de Dieu, aux Saints
et Fidèles en Jésus-Christ qui sont à Ephèse. 2Que la grâce et la
paix vous soient données par Dieu notre Père, et par le Seigneur
Jésus-Christ.

3Béni soit Dieu, qui est le Père de notre Seigneur Jésus-Christ,
qui nous a bénis de toute bénédiction spirituelle dans les [lieux]
célestes en Christ. 4Selon qu'il nous avait élus en lui avant la
fondation du monde, afin que nous fussions saints et
irrépréhensibles devant lui en charité. 5Nous ayant prédestinés
pour nous adopter à soi par Jésus-Christ, selon le bon plaisir de
sa volonté; 6A la louange de la gloire de sa grâce, par laquelle il
nous a rendus agréables en son Bien-Aimé. 7En qui nous avons
la rédemption par son sang, [savoir] la rémission des offenses,
selon les richesses de sa grâce, 8Laquelle il a fait abonder sur
nous en toute sagesse et intelligence; 9Nous ayant donné à
connaître selon son bon plaisir, le secret de sa volonté, lequel il
avait premièrement arrêté en soi-même. 10Afin que dans
l'accomplissement des temps qu'il avait réglés, il réunît tout en
Christ, tant ce qui est aux cieus, que ce qui est sur la terre, en
lui-même. 11En qui aussi nous sommes faits son héritage, ayant
été prédestinés, suivant la résolution de celui qui accomplit avec
efficace toutes choses, selon le conseil de sa volonté; 12Afin que
nous soyons à la louange de sa gloire, nous qui avons les
premiers espéré en Christ. 13En qui vous êtes aussi, ayant ouï la
parole de la vérité, [qui est] l'Évangile de votre salut, et auquel
ayant cru vous avez été scellés du Saint-Esprit de la promesse;
14Lequel est l'arrhe de notre héritage jusqu'à la rédemption de la
possession qu'il a acquise, à la louange de sa gloire.

Luc 8.17-21

17Car il n'y a point de secret qui ne soit manifesté; ni de chose cachée qui ne se connaisse, et qui ne vienne en lumière.

18Regardez donc comment vous écoutez; car à celui qui a il sera donné; mais à celui qui n'a rien, cela même qu'il croit avoir, lui sera ôté.

19Alors sa mère et ses frères vinrent vers lui, mais ils ne pouvaient l'aborder à cause de la foule. 20Et il lui fut rapporté, en disant : ta mère et tes frères sont là dehors, qui désirent de te voir. 21Mais il répondit, et leur dit : ma mère et mes frères sont ceux qui écoutent la parole de Dieu, et qui la mettent en pratique.





Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ . Ամէն.

Անոր մօտ եկան իր մայրն ու եղբայրները եւ չէին կարենար անոր մօտեակ բազմութեան պատճառով: Իմաց տուին անոր եւ ըսին. «Քու մայրդ եւ քու եղբայրներդ դուրսը կանգնած են եւ կ'ուզեն քեզի տեսնել»: Եւ անոնց ըսաւ. «Իմ մայրս եւ եղբայրներս ասոնք են, որ Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը կատարեն» : (Դուկ. 8:19-21)

Յարգելի՛ եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս Յիսուս,

Ճիշդ այս ողջոյնով կ'ուզեմ այսօր խօսքս սկսիլ, որովհետեւ, ինչպէս լսեցինք, օրուայ անտարանական ընթերցուածքին մէջ Տէրը կը պարզաբանէ հարազատութեան հարցը: Պատկերը այսպէս էր. Յիսուս Քրիստոս, իր աշակերտներով, եւ իրեն լսել ցանկացող մեծ բազմութեամբ շրջապատուած, կը քարոզէր: Աստուծոյ խօսքը մարդոց կ'ուսուցանէր՝ անոնց առջեւ բացայայտելով դէպի Երկնային Արքայութիւն տանող ուղին: Եւ դեռ կը շարունակէր այս կարեւորագոյն հարցին շուրջ խօսիլ, երբ մօտեցան Անոր եւ ըսին, որ իր մայրն ու եղբայրները դուրսն են եւ կ'ուզեն իրեն առանձին տեսնել: Ի՞նչ ըրաւ Տէրը: Ընդհատե՛ց իր խօսքը եւ իր հարազատներուն մօտ շտապեց: Ո՛հ, սիրելիներ: Աստուածորդին երկիր եկած էր, որպէսզի ողջ աշխարհը փրկէ եւ բոլոր մարդոց իր եղբայրակիցները դառնալու հնարաւորութիւնը ընձեռէ, ուստի այս յարմար պահն ալ օգտագործեց, որպէսզի մեզի համար այնքան կարեւոր բառերը ըսէ. «Իմ մայրս եւ եղբայրներս ասոնք են, որ Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը կատարեն»: Մի գուցէ, առաջին հայացքէն, քիչ մը խիստ կամ տարօրինակ թուի Տիրոջ այս խօսքը իր արիւնակից հարազատներուն

նկատմամբ, սակայն Աւետարանը ուշադիր ընթերցելն եւ վերլուծելն ետք, բացայայտօրէն կը տեսնենք, որ այս խօսքերուն մէջ Ամենասուրբ Աստուածամօր ու Քրիստոսի արհմակից հարազատներուն համար ոչ մէկ վիրաւորական ակնարկ չկայ: Այլ Տէրը. այդ խօսքերով, միայն ուզեց ընդգծել Նոր կտակարանեան ողջ ուսուցումը այն մասին, որ հոգեւոր հարազատութիւնը վեր է արհմակցականէն, հոգին վեր է մարմինէն:

Եւ վերջապէս, եթէ Յիսուս Քրիստոսի կողմէ մեծ յարգանք ու սեր չդրսւնորուեր իր մօր հանդէպ, ապա անոր խնդրանքով չէր կատարեր իր առաջին հրաշքը Կանայի հարսանիքի ժամանակ, չնայած դեռ իր ժամանակը հասած չէր (Յովհ. 2:1-11): Եւ Նոյնիսկ կրած այդքան տառապանքներէն ետք, խաչափայտին գամուած, չդադրեցաւ հոգ տանիլ իր սիրասուն մօրը եւ անոր հետագայ խնամքը իր սիրելի աշակերտին յանձնարարեց (Յովհ. 19:26, 27): Հետեւաբար համոզուած ենք, որ Տէր Յիսուս Քրիստոս, աւետարանական վերոյիշեալ դրուագին մէջ, եւս մէկ անգամ կը կամենար հասկնցնել մարդոց, թէ որքան կարեւոր է Երկնաւոր Հօր հոգեւոր զաւակները ըլլալ: Այո՛, սիրելի՛ հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ, Արդարամիտ Դատաւորը եւս մէկ անգամ կը խրատէ մեզի, ցոյց տալով, որ երբ խօսքը Աստուծոյ Արքայութեան մասին է, ապա ոչ ոք պէտք չէ ապաւինի իր արհմակցական կապերուն, ընկերային դիրքին կամ նիւթական ունեցուածքին: Այլ հոգեւոր առաքինուութիւններն են, որ կը զարդարեն մարդուն եւ փրկագործ աստիճաններ կը հանդիսանան անոր համար դէպի Երկնային Արքայութիւն տանող ճանապարհին: Աստուծոյ Որդին, իր Սուրբ Մօր օրինակով, ցոյց տուաւ, որ եթէ իր Մայրը աստուածային առաքինութիւնները չունենար, չ'ապրէր Աստուծոյ խօսքով եւ Անոր սուրբ կամքը չկատարէր, ապա անոր ունեցած այդ ամենասերտ արհմակցական կապը անգամ չէր փրկէր անոր: Աստուծոյ կամքի կատարումն է, որ մեզի վեր կը բարձրացնէ արհմակցական ազգակցութենէ եւ Աստուծոյ հոգեւոր զաւակներու դասին: «Այսպիսով, պէտք չէ հպարտանանք ո՛չ արժանափառ զաւակներով, եթէ մենք անոնց առաքինութիւնները չունինք, եւ ո՛չ ալ ազնուաբարոյ ծնողներով, եթէ մեր կեանքերով անոնց չենք նմանած: Զանի որ հնարաւոր է եւ՛ ծնած ըլլալով՝ հայր չըլլալ, եւ՛ ծնած չըլլալով՝ ըլլալ հայր», - կ'ըսէ Սուրբ Յովհան Ոսկեբերանը:

Սիրելիներ, սակայն միշտ չէ, որ ընտանիքը կամ արհմակից հարազատները կը պաշտպանեն մեզ մեր հոգեւոր կեանքին մէջ, ուստի Քրիստոսի վերը յիշուած խօսքերը կրնանք նաեւ

այդ տեսանկյունէն դիտել: Աստուածորդին, ինքն ալ, իրենիններուն կողմէն չընդունուելու դառն փորձը ունէր, երբ իր հայրենի գաւառին մէջ կ'ուսուցանէր մարդոց, իսկ անոնք կը տարակուսէին, թէ Ան ուրտեղէն ունէր այդ ողջ իմաստութիւնն ու հրաշագործ զօրութիւնը, որուն ի պատասխան ըսաւ. «Մարգարէն իր հայրենի գաւառին եւ տունին մէջ պատիւ չունի» (Մտթ. 13:53-57): Եւ ձեզմէ շատերն ալ, միգուցէ, ենթարկուած են նման փորձութեան իրենց ընտանիքին կողմէ: Շատ յաճախ մարդկային ցեղի թշնամին ճիշդ մեր ամենամօտ ու հարազատ մարդոց միջոցով կը փորձէ խոչընդոտել մեր հոգեւոր յառաջընթացը: Մենք կ'աշխատինք, ջանք կը թափենք հոգեւոր ասպարեզին մէջ, կը փորձենք դեռեւս անվստահ քայլերով յառաջանալ Զրիստոնէական կեանքին մէջ, իսկ մեր հարազատներէն կամ ընկերներէն ոմանք ոչ միայն չեն կիսեր մեր համոզումները, այլեւ չեն հասկնար, թէ մեր ինչին է պետք այդ ամէնը եւ միգուցէ նաեւ կը ծաղրեն ու կը քննադատեն մեզ: Եւ այս բնական է Կեանքի ճշմարիտ Լոյսէն հեռացած մարդկային մեղաւոր բնութեան համար: Այս պատճառով էր, որ Զրիստոս ըսաւ. «Մարդու թշնամիները իր տնեցիները կ'ըլլան: Ան որ իր հօրը եւ կամ մօրը ինձմէ անելի սիրէ, ինձի արժանի չէ. ով իր որդին կամ դուստրը ինձմէ անելի սիրէ, ինձի արժանի չէ» (Մտթ. 10:36, 37): Եւ ուշադրութիւն դարձուցէք, սիրելիներ, որ Զրիստոս կը խօսի ոչ թէ ընդհարապէս չսիրելու կամ անոնցմէ երես դարձնելու մասին, այլ կը զգուշացնէ իրմէ անելի սիրելու, մարդկայինը աստուածայինէն վեր դասելու մասին:

Ճիշդ է, ժողովուրդը կ'ըսէ «արիւնը ջուր չի դառնար», այսինքն արիւնակցական կապը երբեք վերջնականօրէն չի խզուիր, սակայն մէկ այլ իրողութիւն ալ կայ, ըստ որուն կրնաս հոգեւոր այնպիսի ճշմարիտ եւ ամուր ընկերութիւն հաստատել քեզի ոչ արիւնակից, սակայն նոյն գաղափարներուն եւ հաւատքին հետեւող մարդոց հետ, որ կրնայ վեր ըլլալ նոյնիսկ արիւնակցական յարաբերութիւններէն: «Նոր պատուիրան մը կու տամ ձեզի, որ սիրէք իրար. ինչպէս ես ձեզ սիրեցի: Եթէ դուք իրար սիրէք, այդպիսով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներս էք» (Յովհ. 13:34, 35),- կ'ըսէ Տէրը: Եւ Զրիստոս է, որ կը միաւորէ մեզ այդ սիրոյ մէջ՝ մեր հոգեւոր հայացքները ուղղելով դէպի մեզի Սիրող Յայրը: Աստուծոյ եւ իրար հանդէպ ունեցած ճշմարիտ սիրով ու միասնականութեամբ է, որ եկեղեցւոյ համայնք կը կազմենք, ըսել է թէ՛ հոգեւոր ընտանիք, ի մասնաւորի Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ հաւատաց-

եալներդ : Եւ երբեք ու երբեք մեր հոգեւոր գանձերը պետք չէ խառնել կամ միախառնել մեր ժամանակներու հրապուրանքը խաբկանքը հանդիսացող Հալլուհի, անդրշիրիմեան արիւնարբու եւ վախ ներշնչող կերպարներու հետ :

Արդ, Երկնաւոր Հօր կամքը կատարելով Է սիրելիներ, որ եղբայրակից կը դառնանք Քրիստոսին ու ժառանգակից՝ Աստուծոյ Արքայութեան: Եւ խօսքս կը կամենայի աւարտել Պօղոս Առաքեալի յորդորով, սիրելիներ. «Ապրեցէք այնպէս, ինչպէս վայել է այն կոչման, որուն կոչուեցաք. կատարեալ խոնարհութեամբ, հեզութեամբ եւ համբերութեամբ հանդուրժեցէք իրար սիրով, ջանացէ՛ք պահել հոգիի միութիւնը խաղաղութեան կապով. մէկ մարմին եւ մէկ հոգի, ինչպէս որ մէկ է ձեր յոյսը, որուն Աստուած կոչեց մեզ: Մէկ Տէր կայ, մէկ հաւատք, մէկ մկրտութիւն, մէկ Աստուած, Հայր բոլորին, որ Է բոլորին վրայ, բոլորին հետ եւ մեր բոլորին մէջ» (Եփես. 4:1-6): Ամէն:

Օրհնութեամբ՝
Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան



Ժամերու փոփոխութիւն սկսեալ Կիրակի, 3
Նոյեմբեր 2019-է:

DST ends on Sunday, November 3, 2019, at 2:00
A.M. At this time, we "fall back" in the fall by
setting clocks back one hour





ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ՌԻԽՏԱԻՈՐԻ ԱՂՕԹՔ

Կեանքի առաջնորդ եւ
ճշմարտութեան ճանապարհ
Տէր մեր Յիսուս Զրիստոս, որ
Յովսէփը առաջնորդեցիր դէպի
Եգիպտոս, իսրայէլացիները
անցուցիր Կարմիր ծովէն, Մովսէսը
առաջնորդեցիր Սինա լեռը, իսկ
Ժողովուրդը՝ պարգէւներու երկիրը,
ինչպէս նաեւ Կղեովպաստաններուն
ճանապարհորդակից եղար
Էմմաուսի մէջ,

Կ'աղաչեմ քեզի Տէր, առաջնորդէ
մեզ եւ մեր եղբայրները՝

ընթանալ խաղաղութեամբ, փրկէ տեսանելի եւ
անտեսանելի թշնամիէն եւ բարիով առաջնորդէ
դէպի նշանակուած վայրը, որովհետեւ դուն ես
ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը, եւ
քեզի կը վայելեն փառք եւ երկրպագութիւն,
իշխանութիւն եւ պատիւ,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. Ամէն:

PRIÈRE DU PÈLERIN

Guide de vie, Chemin vers la vérité,
notre Seigneur Jésus-Christ, Tu as conduit Joseph
en Egypte, le peuple d'Israël à travers la Mer Rouge,
Moïse vers le mont Sinaï et son peuple vers la Terre Promise.
Tu as fait route avec Cléophas et son compagnon vers Emmaüs.
Maintenant, je T'en prie, Seigneur, conduis-moi, ainsi que mes
frères, pour que nous accomplissions dans la paix ce voyage qui
commence. Sauve-nous de l'ennemi visible et invisible et
conduis-nous sans danger vers ce lieu vers lequel nous
cheminons.

Car Tu es notre Chemin, notre Vérité et notre Vie.
A Toi, la gloire et l'adoration, maintenant et toujours,
dans l'éternité de l'éternité. Ame

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
ԿԻՐԱԿԻ, 3 ՆՈՅԵՄԲԵՐ 2019**



Տիկ. Տիդա Մէնէնտեանի,
Պրն. Սարօ Մէնէնտեանի,
Տ. եւ Տիկ. Խաչօ եւ Անի Մէմերճեանի
եւ դուստրին՝ Արլինի,
Տ. եւ Տիկ. Լեւոն եւ Տիանա Մէֆերեանի եւ ընտանիքին,
Տիկ. Նաժտա Մէնէնտեանի եւ ընտանիքին,
Տ. եւ Տիկ. Անտրէ եւ Գարին Օհանջանեանի,
Տ. եւ Տիկ. Հերման եւ Թալին Եայլաօղլուի,
Տ. եւ Տիկ. Հերման եւ Ալին Մետէֆի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

**ՆԱԹԱՆ ՄԷՆԷՆՏԵԱՆԻ
(NATAN MENENDYAN)**

Մահուան առաջին տարելիցին առիթով:



Տիկ. Սիրուհի Մկրտիչեանի,
Տ. եւ Տիկ. Նորայր եւ Փայլին Կիրնակիւլի,
Տ. եւ Տիկ. Ժիլպէր եւ Ռինա Մկրտիչեանի եւ
զաւակներուն՝ Ալեքի եւ Մարգի,
Մարթէն եւ Մելիսա Կիրնակիւլներու,
Տիկ. Ֆիլօր Գալքթիքի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր, մեծ մեծ մօր
եւ քրոջ՝

**ԱՐՈՒՍԵԱԿ ԿԻՐՆԱԿԻԿԻ
(ARUSYAK GURNAGUL)**

Մահուան առաջին տարելիցին առիթով:



ՏԱԻԱԿՏԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Սայր Տաճարի Հոգևոր Հովիւն ու Եփսական Խորհուրդը իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն Մանուկեան եւ Մազմանեան-Սեւունց ընտանիքներուն՝

Ողբացեալներ

Հայկ Մանուկեանի եւ Մարօ Մազմանեան-Սեւունցի (22 Հոկտեմբեր 2019):



The Parish Priest and the Parish Council of the St. Gregory the Illuminator Armenian Cathedral express their deepest condolences to the Manoukian and Mazmanyan-Sevunts families on the loss of their beloved:

Haig Manoukian, and Maro Mazmanyan-Sevunts (October 22, 2019).

~ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ~



Միրելի բարեպաշտ քայրեր եւ եղբայրներ, Հէլլէուիսի տօնախմբութիւնը բացարձակ որելէ ԿԱՊ ՉՈՒՆԻ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ հետ, նաեւ՝ մեր մշակոյթին եւ ինքնութեան հետ:

Աւելին՝ այդ տօնակատարութիւնը ՄԵՐԺԵԼԻ Է եւ ԴՍՏԱՊԱՐՏԵԼԻ, որովհետեւ փաստօրէն մեր հասարակութեան տարբեր անդամներ, ըլլալով քրիստոնէայ, կը տօնեն հեթանոսական տօն մը՝ կամայ թէ ակամայ ներքաշուելով ատոր հիմքը հանդիսացող ՍՍՏԱՆԻՍՏԱԿԱՆ պաշտամունքներու մէջ:

Մեր ժողովուրդը պէտք չէ տուրք տայ այդ օտարաշունչ երեւոյթին, այլ ընդհակառակը պէտք է ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ՄԵՐԺԷ, որովհետեւ, այն կու գայ տարեմուտին կատարուող կէտական գիշերային խրախճան-քներէն, որոնք կուղեկցուէին զինարբութեանը եւ անբարոյ տեսա-րաններով՝ այն հաւատքով, որ այդպիսով կը վերանար ողջերու եւ մեռեալներու աշխարհը բաժնող սահմանը: Իսկ զգեստաւորուելով չարը խորհրդանշող տարբեր դիմակներով ու գազաններու մորթերով՝ կէտերը կը վախցնէին ոգիներուն, հիւրասիրութիւն կը պատրաստէին՝ սիրաշահելու նոյն չար ոգիներուն՝ հեռու պահելու անոնց իրենց յարկերէն:

Եթէ պէտք է նմանիք օրինակներու, Հայոց Եկեղեցին եւ Հայ Ազգը բազմաթիւ օրինակներ տուած է դարերու ընթացքին, ինչպիսիք են

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, Վարդան Մամիկոնեանը, Սուրբ Սանդուխտ կոյսը, Սրբոց Հռիփսիմեանք, Սուրբ Ներսես Շնորհալին, Դավիթ Անյաղթը, Կոմիտաս վարդապետը, Վիքթոր Համբարձումեանը, Միլվա Կապուտիկեանը եւ մերօրեայ բազմաթիւ հերոսները:

Ճիշդ է հետագային տօնը արհեստականօրէն զգեստաւորուեցաւ քրիստոնէութեամբ. հեթանոսական տօնախմբութեան եւ քրիստոնէական «Բոլոր սուրբերու տօնի» ամսաթիւերուն համընկնումը ակամայօրէն պատճառ հանդիսացաւ, որպէսզի կէլտական Սամայնի տարրերը հասնին մինչեւ մեր օրերը: Կը տեղեկացնեմ, որ Հայոց Եկեղեցւոյ մէջ «Տօն ամենայն սրբոց, հնից եւ նորից, յայտից եւ անյայտից»-ը շարժական տօն է եւ չի նշուիր պարտադիր Նոյեմբեր 1-ին:

Կրնայ զուարճալի թուիլ այդ տօնակատարութիւնը յարգելի հաւատացեալներ, բայց, հաւատացե՞ք, իր բուն խորհուրդով իր աւերը ան ակամայօրէն կը գործէ:

ԶԳՕՆ ԵՂԷՔ:
Եկեղեցւոյ Դիւան

Շարքուայ խորհրդածութիւնը

- «Նկատի ունեցէք, թէ երեխաները կենդանի սրբապատկերներ են, աշխատեցէք անոնց հետ, անտարբերութեամբ եւ անփութութեամբ մի խեղաթիւրէք Աստուծոյ պատկերը անոնց մէջ»:
Իուանն Վրո. Զրեւթեանցին
- «Եթէ կ'ուզես եկեղեցիին օգնել, այդ պարագային աւելի լաւ է աշխատիր դուն քեզ շտկել, այլ ո՛չ թէ ուրիշներուն: Եթէ դուն քեզ շտկես, այդ ժամանակ անմիջապէս կը շտկուի եկեղեցւոյ մէկ մասնիկը»:
Ս. Պայիսիոս Աթոսացի

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

Mrs. Sonia Yeghiayan \$250, Mrs. Nevart Demir \$50

ANNUAL BAZAAR:

Mrs. Henika Sozkes \$1500, Mr. & Mrs. Krikor & Armine Kanar \$500,
Mr. & Mrs. Ara & Mary Gerikyan \$100,
Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy \$100, Mrs. Irma Asiciyan \$70,
Mrs. Arsaluys Divriklian \$50,
Mrs. Mary Doramajian \$25, Miss Shoushan Aroyan \$20.

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE MARO MAZMAMYAN-SEVUNTS:

Mrs. Hasmik Saroukhanian \$50.

HOKEHANKISD:

THE LATE ROSE TATIGIAN:

Mr. & Mrs. Sevan Tatigian \$250.

THE LATE NOURITZA SAGLAM:

Miss Yepraksi Saglam \$100, Mrs. Araksi Saglam \$20.

THE LATE CHAKE AZIRIAN:

Mrs. Ritza Avedissian, Mrs. Lena Azirian \$30,
Mrs. Silva Laffe \$25.

Saturday November 2, 2019

Feast of All Saints - the old and the new, the known and the unknown

By this feast the Armenian Apostolic Church commemorates the memory of all those saints, whose names are not included in the Church Calendar, but whose names are registered in the sacred book of the Heavenly Kingdom.

Many people have been subjected to severe torments and have been martyred during the wars for the sake of faith. Unfortunately, we do not know their names. So the Church has established this feast in the Church Calendar in order to commemorate their memory. They are persons who shed their blood for the sake of Christ and His Church.



**Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Տաճարի
Տարեկան Պագար-Տոնավաճառի Առթիւ**

Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին եւ Ծխական Խորհուրդին կողմէ մեր սրտագին շնորհակալութիւնը կը յայտնենք Եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբին, Օժտնոյակ Տիկիներուն, Լուիւրատուներուն եւ բոլոր անոնց, որոնք նիւթապէս, բարոյապէս եւ անձնուիրաբար նպաստեցին Պագար-Տոնավաճառի կազմակերպման աշխատանքներուն, որոնց շնորհիւ Պագար-Տոնավաճառը պատկուեցաւ իր բացառիկ յաջողութեամբ, զոյգ օրերու ընթացքին:

Մեր խորին շնորհակալութիւնը նաեւ Օրուան Պատուոյ հիւրին՝ Տիկին Հենիքա Սօգքեպին, որ սիրալոյսով կերպով ստանձնեց մեր այս տարուայ Պագար-Տոնավաճառին Պատուոյ Նախագահութիւնը:

Մեծապէ՛ս մեր օրհնութիւնն ու գնահատանքը բոլորին:

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճարի Կիրակնօրեայ Վարժարանը կարիքն
ունի ուսուցիչներու դասաւանդելու համար
գծագրութեան դասընթացքներ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել
քարտուղարութեան՝ (514) 279-3066
տուեալները ուղարկել հետեւեալ
stgregorychurch@gmail.com

Շնորհակալութիւն

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԼՔ

Ս. ՊՄԱԿԱՐԻՈՒԹԵԱՆ

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի
Հոգևոր Հովին ու Ծխական Խորհուրդը
կը շնորհատրեն Մարաշլեան ընտանիքը իրենց գաւակներուն՝
26 Հոկտեմբեր 2019**

**Նուպար Մարաշլեանի եւ Տօմինիք Պէլանժէլի
Ս. Պատկադրութեան ուրախ առիթով:**

CONGRATUALIONS

**The Parish Priest and the Parish Council
of the St-Gregory the Illuminator Armenian Cathedral extend their
congratulations to Mareshlian family on the occasion of their
Son's and daughter's Wedding
October 26, 2019
Noubar Mareshlian and Dominique Belanger**

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԼՔ

Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի
Հոգևոր Հովին ու Ծխական Խորհուրդը կը շնորհաւորեն
Պէօճէքեան եւ Լաքայեան ընտանիքները իրենց գաւակներուն
Ս. Մկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով:**

13 Հոկտեմբեր 2019

Կապրիէլ Փոլ Պէօճէքեան

26 Հոկտեմբեր 2019

Չէյն Լաքշմինարայան



CONGRATULATIONS

***The Parish Priest and the Parish Council
of the St-Gregory the Illuminator Armenian Cathedral
Extend their congratulations
to Beudjekian and Lakshminarayan families
on the occasion of their children's Baptism***

October 13, 2019

Gabriel Paul Beudjekian

October 26, 2019

Zayn Lakshminarayan



ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք՝

**Թէ Ձեր ինքնաշարժերը ապահով կերպով կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող**

**Centre Education des Adultes Outremont դպրոցին
կայանատեղիին (parking)-ին մէջ:**

Չասցեն կարելի է տեսնել ստորեւ կցուած յայտարարութեան մէջ:

**Նաեւ՝ կարելի է օգտագործել Stuart պողոտային կից գտնուող
Չիւսիսային Lajoie փողոցին երկու կողմերը:**

Շնորհակալութիւն

Ծխական Խորհուրդ

PARKING

**We would like to inform you that
you can safely park your cars**

In the parking lot of the

Center Education des Adultes Outremont School

on Bernard street.

The address can be found in the attached map below.

You can also park on both sides of North Lajoie Street

adjacent to Stuart .

Thank you

Parish Council



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2



ՄՈՆԹՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԽԱՒՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ



ՀՈՎԱՆԱԲՈՐՈՒԹԵԱՄԲ՝
ԳԵՐԾ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՀԱՄԵՐԳ ԼՈՒԲՈՒԿՏ

ՀԱՆՃԱՐԵՂ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԾԵԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ



Մաշա Հիսանեան

ԾՆՆԴԵԱՆ 150 ԱՄԵԱԿԻՆ

Ելոյթ կ'ունենան հանրաժանօթ
արուեստագետներ՝



Մարգիս Պարսէմեան

**Շաբաթ, 30 Նոյեմբեր
2019 երեկոյեան ժամը
8-ին**

ԵԿԵՂԵՍՈՂ ՄԷԶ:

Հանդիսութեան աւարտին՝
հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան»
տրահին մէջ:
Մանրամասնութեան համար հեռաձայնել
(514) 279-3066
Ողջ հասոյթը կը յատկացուի
Վերանորոգութեան Դրամարշաւին:
Մուտքի նուէր՝ \$30



Գոհար Մանուկեան

49

թղթի



ՏԱՐԵԴԱՐՁ

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Գնման, Օծման եւ Անուանակոչութեան

ANNIVERSARY

of the St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Հովանաւորութեամբ

Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի

Բարեխնամ Առաջնորդ Գանատահայոց Թեմին

Կիրակի, 15 Դեկտեմբեր 2019

Sunday, December 15th, 2019

Սկիզբ Ս. Պատարագի առաւօտեան ժամը 10:30-ին

Պատարագի՝

Առաջնորդ Սրբազան Հայր

Յաւարտ Ս. Պատարագի

Տօնական ճաշկերոյթ եւ Գեղարուեստական Յայտագիր «Մարի Մանուկեան» սրահին մէջ


Anniversary Banquet & Cultural Program in «Marie Manoogian» Hall

Տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066

Մինչեւ 10 Դեկտեմբեր 2019

Please call to reserve (514) 279-3066

till December 10th, 2019





**Մեր երեխաներուն համար
Պահպանե՛նք ժառանգութիւնը, կերտե՛նք
ապագան**

**Սոնթրեալի Աք.Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ եկեղեցին շտապ
վերանորոգման կարիքն ունի:**

**Ճարտարապետական ուսումնասիրութիւնները
ի յայտ բերին թէ եկեղեցոյ արտաքին
շաղախներն ու ենթակառոյցները անմիջական
վերանորոգման կը կարօտին: Յառաջիկայ հինգ
տարիներու ընթացքին, գաղութս պետք է
հաւաքէ բաւական նշանակալի գումար մը: Իսկ
այս առաջին փուլը կը կարօտի \$ 250,000 ի:
Շտապ:**

**Եկե՛ք միասնաբար ապահովե՛նք մեր գաղութի
ապագան:**



POUR NOS ENFANTS

Pour protéger notre héritage : Pour bâtir notre future

L'église St. Grégoire l'Illuminateur de Montréal a un besoin URGENT d'initier et d'exécuter des restaurations majeures à la structure de la bâtisse

Les études architecturales et d'ingénierie ont conclu que la bâtisse de notre élégante église cathédrale de 90 ans nécessitera pour les cinq (5) années prochaines d'importantes

restaurations de la maçonnerie de pierre sur son extérieur, des supports des vitraux plombés des fenêtres dans son intérieur et d'autres modifications structurelles et ceux-ci requièrent un montant assez élevé. La phase 1 de ses travaux estimés à \$250,000 a déjà démarré

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire



Օրինութեամբ Գանատահայոց Թեմի Բարեխնամ
Առաջնորդ Գերաշնորհ
Տէր Աբգար Եպիսկոպոս Յովակիմեանի
Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր եկեղեցւոյ

«Կոմիտաս» Դպրաց Դասը
Յունուար 2020-ին կը նախատեսէ
կազմակերպել

«ԿԱՏԱԿ ԵՐԳ»

խորագրով երեկոյ մը

Յայտագիրը կը պարունակէ.

- հայկական ժողովրդական,
սիրային եւ կատակերգի ճոխ
երգացանկ մը,

որ պիտի ներկայացուի

գեղարուեստական բեմադրութեամբ:

- Յայտագրի ընթացքին պիտի մատուցուի
հայկական աւանդական ուտեստ եւ հայկական զինի:

Յայտագրին մաս կազմել փափաքողները
մինչեւ 15 Հոկտեմբեր 2019

կրնան դիմել «Կոմիտաս» Դպրաց Դասի խմբավար
Տիար Սարգիս Պարսեմեանին՝ Barsemians@Gmail.com



**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ**



**Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ**

**ԱՄԵՆ Հինգշաբթի
երեկոյեան՝ ժամը 7:00-ին Եկեղեցւոյ մէջ**

**Études bibliques et discussions
avec le R.P David Margaryan**

**Chaque Jeudi à 19h00
à l'église**

**Կը հրաւիրենք մեր սիրելի
հաւատացեալները մասնակից ըլլալու
Աստուածաշնչական Նիւթերուն**

**Nous invitons nos chers fidèles à participer à ces
séances d'interprétations bibliques.**

**Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն
Une collation de café et de thé est servie**

**Ի սրտէ կ'անկակալենք բոլորին
Ներկայութիւնը**

**Nous comptons sur votre
participation massive**



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:

(514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN
ԿԻՐԱԿԱՍՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**



Միրով կը յայտնենք, թէ
Շաբաթ, 30 Նոյեմբեր 2019-ի
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի
կատարուի Մոնթրէալի Մբ. Գրիգոր
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները
ներկայ գտնուելու հոգեպարար այս
արարողութեան:

*Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան*



Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ Կիրակի, Սեպտեմբեր 8-ին նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը մեկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանի 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացները.

1. Հայոց լեզու
2. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ
3. Մանկապատանեկան երգչախումբ
4. Շախմատ (ճատրակ)
5. Նկարչութիւն
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմուկ):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին:
- դասընթացներու համար պիտի գանձուի խորհրդանշական գումար՝ 1 փոքրիկի պարագային՝ ամիսը 15 տոլար, երկուքի պարագային՝ 25 տոլար, իսկ երեքի պարագային՝ 33 տոլար:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն անձամբ կամ հետեւեալ Ե-հասցեներով (e-mail)՝

haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:

Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝

Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098

